

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

—ԽՄԲԱԳԻՐ—

ՅՐԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

49^{րդ} ՏԱՐԻ, ԹԻՒ 8

19 ՓԵՏՐՈՒԱՐ 1900

Մասիս շաբաթերի սահեկան բաժանորդագիւնն է կես օսմ. ոսկի քէ՛ Կ. Պոլսոյ եւ քէ՛ գաւառներուն համար, կանխիկ : Արտասահման՝ 12 Ֆրանկ : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն :

Մասիս հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առօրէ, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխաՎանառներուն ու Պահչե-Դաբուի ջրավանառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավանառներուն հոլ :

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ՝ 40 ՓՍՐԱՅԻ

ՀԱՍՅԻ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»Ի

Ղալաթիս, Նորաստանկեան Խան, Թիւ 13

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Է Ք Ի Թ Ա Պ Լ

Ամերիկեան Ապահովագրական Ընկերութիւն

ԱՇԽԱՐՀԻՍ ԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԷՆ ՀԶՈՐԸ

Տնօրէն Թուրփոյ ԴԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱՇԱՏՈՒՐ, Պոլիս, Անանիասի խան

Ի դէպ մահու ապանովագրութիւն

Միայն 20 տարեկանով

Մահուան պարագային տարեկանը կը դադրի

(VIE 20 PRIMES)

Օ Ր Ի Ն Ա Կ

Տարիք 35, գումար 100,000 Փրանք ի դէպ մահու վճարելի

Փրանսական ընկերութեանց թարիֆին համաձայն տարեկանը է	Փր.	4140
Էփիքապլ ընկերութեան թարիֆին համաձայն տարեկանը է	»	3408
Տարեկան տարբերութիւն ի նպաստ էքիթապլի	»	732
20 տարուան մէջ տարբերութիւն ի նպաստ էքիթապլի	»	14640
100 ին 5 էն բաղադրեալ տոկոսով	»	25414

Այսինքն աւելի քան 6 տարեկանի խնայողութիւն մը Ի Ն Պ Ա Ս Տ Է Ք Ի Թ Ա Պ Լ Ի

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Զ Ե Կ Ո Յ Ց

Թեեւ մեր առաջին յայտարարութեամբ ծանուցած էինք բէ Մասիսի բաժանորդագրութիւնները 1900 Յունուար 1է միայն կը հաշուուին, բայց յունուարի մէջ հրատարակուած հինգ քիւրեր բոլորովին սպառած ըլլալուն պահառաւ հաշիւադրուած են գործնական բարեփոխում մը ընել, ամեն ամսոյ 1էն բաժանորդագրութիւն ընդունելով, — միշտ մէկ տարուան համար սակայն: Այս կերպով պիտի կրնանք գոհացում տալ յաջորդաբար հասնող յանձնարարութիւններուն:

Դ Ե Ղ Ա Ր Ա Ն “Ն Օ Ռ Մ Ա Լ”

192 ԲԵՐԱ ՄԵԾ-ՓՈՂՈՑ 192

Բերայի կեդրոնը, եւ «Սիթէ տը Բերա» չէնքին անկիւնը հաստատուած այս նոր դեղարանը որ դեղագործութեան արուեստին ամէն կատարելութիւններով օժտուած է, իր դեղերուն զտութեամբ, թարմութեամբ եւ դիւրամատչելի գիներով օգտակարապէս կը ներկայանայ կրկին հասարակութեան եւ իր վաղեմի յաճախորդներուն:

Դեղարանին տէրը՝ Հ. Էմիրդէեան՝ քանի տարիներէ ի վեր ծանօթ է Կ. Պոլսոյ Սուլթան Մահմուտի դամբարանին դիմաց իր ունեցած մեծ դեղարանովը զոր ամբողջովին ծախած եւ այս նորը հիմնած է:

Դեղարանին վրայ խորհրդակցութեան սենեակ մը յարգելի բժիշկներուն տրամադրութեան ներքեւ գրուած է եւ դեղարանը մինչեւ կէս գիշեր բաց է:

Վ Ի Պ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Հետոն Սեղբոսեանի (Շանթ) վէպերը կը ծախուին բոլոր գրավաճառներուն քով հետեւեալ գիներով.

ԵՐԱԶ ՕՐԵՐ	(1896)	6 ղրուշ
ԴՈՒՐՍԵՅԻՆԵՐ	(1897)	7 »
ՎԵՐԺԻՆ	(1898)	8 »
ԴԱՐԶ	(1899)	6 »

Կեդրոնատեղին է Զարդարեան Գրատուն, Զաքարեայ Թղթատարով ուղղոնները պէտք է 40 փարա աւելի վճարեն իւրաքանչիւր հատորի համար:

ՄԱՍԻՍ

49րդ ՏԱՐԻ

— 19 ՓԵՏՐՈՒԱՐ 1900 —

ԹԻԻ 8

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Ագրոխ»ցունները. ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ, — Բանաստեղծութիւններ. Անցնելու մօտ. ՍԻՊԻԼ, — Գրքի գրօսանք. Յանգապատում. Ա. ՓԱՆՈՍԵԱՆ, — Իմ առաջին հրատարակութիւնս. Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ, — Գրականական. «Թէ ինչ է Իսթերին», ՏՈՒԹ. ՅՈՎԱ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ, — Քաղաքական կացութիւնը. Մ. — Անհետացող դէմքեր. Աստուածատուր եպիսկոպոս. ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ, — Վարդընշքայնի պանդոկը. (Ուղեւորական յիշատակներ) Տ. Հ. — «Մասիս»ի Յուշատետրը. Տ. Ա.

“ԱԳԹՐԻՍՑՈՒՆԵՐԸ”

— Աս աղջիկները քանի՞ տարու են :
— Պզտիկը տասնչորեք տարու , մեծն ալ տասներէնյոյն մօտ :

— Ի՞նչ ընելու պիտի երթան Ագչէ՛ր :
— «Ագթոխ»ուծիւն :

Այս հարցափորձը տեղի կ'ունենար Թաղ. Խորհրդարանի մը մէջ , — մեծ արուարձանի մը Թաղ. Խորհրդարանը որ պզտիկ Պատրիարքարանի մը չափ գործառնութիւններ կ'ունենայ , — ուր կը գտնուէի զիպուածով, կիրակի առտու մը : Վերջին բառին , որուն բարդութիւնը նոյնքան պիտի խրաչեցնէր Նորայր մը կամ Նուպարեան մը՝ որքան անոր իմաստը պիտի զարհուրեցնէր Մեհմուդայի Ախպարի պարկեշտամուլ յօղուածագիրը, ուշադրութիւնս այն կողմը դարձուցի ահմանելու համար թէ ո՞վ էին մեր ապագայ Ռէժանները կամ Ժիւ. Թիքները որոնք իրենց impresarioներուն հետ եկած էին անցադրի նախնական ձեռակերպութիւնին կատարելու :

Իրենց վերադրուած տարիքը ունէին տղարեւ , թերեւս քիչ մըն ալ պակաս . մէկ մէկ սեւ ու ազտօտ չրջազգեստ հագած , որոնք հազիւ մինչեւ ծունգերնին կը ծածկէին , աղքատիկ երեւոյթով , խրոխտ

կեցուածքով , թուրակօրէն կը պատասխանէին ատենագետին հարցումներուն : Պզտիկը մանաւանդ , վախտ , գունատ , Գօզէթի մանկութեան պատկերին իրականացումն էր կարծես , — պակաս՝ անմեղութեան շնորհը . մեծը աւելի կայտառ երեւոյթ մը ունէր , աւելի համարձակ , Երկու բարձրահասակ ու տարէց մարդեր կ'ընկերանային անոնց , երկու «գերատան»ներ , ինչպէս կը կոչէին ինքզինքնին :

Հարցափորձը բաւական երկար տեւեց , ատենագետին թափանցող մտքին ու կեանքի փորձառութեանը շնորհիւ , որ առջի վայրկեանէն կուահեր էր՝ մոլորանքի մը նախաքայլը այդ զի՛նումին մէջ որ կ'ըլլար գեղարուեստի անունով : Բացարձակապէս մերժեց տալ խնդրուած վկայողիւնները , յանդիմանութեան տարափ մը տեղացնելով երկու մարդերուն վրայ որ չէին խղճար «ճամպաղութեան» տանիլ այդ գեղատի արարածները , — վասն զի խրախաղացէ ուրիշ ի՞նչ կրնար ըլլալ «աթթոխ» կամ գերասանուհի ըսածնին՝ իրենց ուսմիկ ըմբռնումով : Ու մինչ մեծը դուրս ելաւ մայրը բերելու , որ պիտի վկայէր թէ իր յօժարութեամբը կը յանձնէ զաւակը , պղզ-

տիկը լեզու կը թափէր համոզելու համար թէ ի՞նչ կ'ապրեցնէր իր հիւանդ մայրը ու քոյրը, թէ Պոլսոյ բեմերուն վրայ խաղացած էր արդէն . . . :

— Քեզի վայելիք տեղը Գալֆայեան որբանոցն է, ընդմիջեց անոնապետը, հայրական՝ բայց խիստ լեզուով մը . հոն կ'երթաս կը կրթուիս, ձեռագործ կը սորվիս . ել՛ի ծնողքդ աղքատ է, մենք կը հոգանք :

* * *

Դիպուածը ամէն տունն ասանկ տեսարաններ չի ներկայացնէր հրապարակագիրներու աչքին, որոնք որբի ու աղքատի վերաբերող գրուածքներ ու լուրեր միայն կը գտնեն իրենց սեղանին վրայ ընդհանրապէս, անսպառ ու տխուր նիւթը : Առանց աւելի մանրամասնութեան մտնելու եւ առանց անուններ տալու, կը մտածեմ թէ անօգուտ չէ գրադիլ երբեմն՝ մօլորանքի ճամբուն եզրը գտնուող, խաբուսիկ չլացումով մը մեղանչելու մղուող ծաղկահասակ աղջիկներուն խնդրով ալ, որ ընտանեկան ու ընկերային խնդիր մըն է ամէն տեղ ու ամէն ժամանակ : Ապրելու պէտքը ու երբեմն ալ փայլելու տենչը — որ չեւ զի տեր ինչպէ՛ս ծնունդ կ'առնէ իրենց օրուան հացը վնասող այդ մատաղատի էակներուն մօքլին մէջ, — սկզբնապատճառը կ'ըլլան աղէտին որ ա՛լ չի թողուր իր զոհը մինչեւ որ կարելի ըլլայ օրին մէկը ըսել անոր համար

Անձնամատոյց կ'ինն էր ան որ կը թաղուէր Փոսի մը մէջ ցեխի, անոգ ու անվոյր . . .

Ծնողքները, պաշտպանները, ի՞նչ աչալուրջ հսկողութիւն մը ընելու կամ ընել տալու պարտք ունին չքաւոր աղջիկներուն վրայ որոնք կար կարելու կամ որեւէ աշխատութեան համար կը բացակային ծնողական յորկէն, միս միսակ, համարձակ, ու օր մըն ալ, անզգալարար, անգիտակցարար, ինքզինքնին ենթարկուած կը գտնեն ազգեցութեանը մարդու մը կ'ամ ջատուկի մը որ կ'ըսէ իրենց . « Մեղքը չէ՞ ազուոր մատուըներուդ որ ասեղ պիտի ծեծեն » : Անոնք ալ որբեր են, բարոյական որբեր, արեւցող հօր մը կամ անգի-

տակից մօր մը զաւակ, զոր հոսանքը կ'առնէ կը տանի մինչեւ ուր որ կարելի է իջնել : Թաղականներէն աւելի՝ Աղքատտիրնամները առիթ կ'ունենան մօտէն տեղեկանալու կեանքի այդ տխուր տռամներուն, ընտանիքի մը կարօտութեան աստիճանը կ'ամ հիւանդի մը վիճակը ստուգելու առթիւ իրենց դէմ գտնելով իրականութիւն մը որ անօթութենէն ու հիւանդութենէն սաստկադոյն է . աղջիկ մը որ պիտի սայթայքի, կամ մանկամարդ կ'ին մը որ անկողին ինկած իր էրիկէն հեռու կը փախչի :

Աղքատախնամի անգամներն ու անգամուհիները, — որոնց խորհրդապահութիւնը իրենց լաւագոյն յատկութիւններէն մէկն է, — ի՞նչ հոգեկան ցաւերու, բարոյական անկուսներու տխուր՝ բայց կարեկից հանդիսատեսները կ'ըլլան : Այս տեսակէտով, այդ անձնուէր մարմինները՝ հիւանդին զեղ ու բժիշկ, եւ աղքատին՝ հաց ու ածուխ հասցնելէ աւելի՝ էական գործ մը կը կատարեն շատ անգամ, լսիկ մնչիկ, իրենց սրտի ձայնին լսելով քան իրենց ստանձնած պարտականութեան հրահանգին, բարոյական վերականգնումի ձեռք կարկառելու համար՝ ել՛ի գեռ ժամանակ կայ : Մանաւանդ կ'ինները, բժիշկները ու քահանաները, երբ գործօն բաժին մը կը ստանձնեն Աղքատախնամներուն մէջ, ամէնէն աւելի օգտակար կը դառնան այս մեծ ու վարակիչ ցաւին :

* * *

Թաղականի այն ատենապետը որ երկու «աթթիս»ցուներուն «ապագան խորտակեց», անոնցմէ մէկը Որբանոց զրկել ու միւսը իր ծնողքին քով վերադարձնել ուզելով, չա՛տ փրկարար գործ մը կատարած եղաւ վայրկեանապէս : Ո՛ւր էր թէ այդ բարի գործը անհետեւանք չթողուելու համար, գտնուէին երկու հարուստ Տիկիններ որ իրենց պաշտպանութեան ներքեւ առնէին այդ սեւահանդերձ ու վախ աղջիկները որոնք այնքա՛ն կ'անուխէն համոզուէր են թէ լարախաղացութիւնը աղուոր ապագայ մը կը խոստանայ իրենց :

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԱՆՅՆԵԼՈՒ ՄՈՏ



ՈՅՍԻ փունջ մը, շող շիւղերու կուռ հիւսկէն,
Հորիզոնէն վար հուր ու բոց կը բափէ
Լերան ծալքը ցոյքեր մութք կը պըրկեն
Ցանցի մը մէջ լայն վերտերով սատափէ:

Քունէն զարթած կ'երգէ մարին, վարուժան
Ոստերն ի վար կախուած բոյնին մէջ տառուկ:
Դաշտերուն մէջ հոյլ հոյլ գառներ կը խրժան
Շաղով օծուած մարմանդներուն մէջ ճամուկ:

Շամբերուն հոծ շուքին տակէն դողդոջուն՝
Դեպի ծովուն ափերն ի վար աւազէ,
Ուր փըրփուրին կը նըշմարես վախկոտ ջուն,
Լուսածիծաղ առուն վէտ վէտ կը վազէ:

Ոջ հրմայքէն առուին տնկոտ կարկաշին,՝
Շողին, ցողին լոյս ծիծաղէն արծաթի,
Ոջ ալ աշգուն ջերմ համբոյրէն առաջին
Մեր սըրտին մէջ վարդ անուրջ մը կը ծաթի:

Մենք ջենք սիրեր կեանքն յորդաշունջ, կենդանի.
Անցնելու մօտ իրերն ըզմեզ կը կարբեն,
Ու կը ցախնք երբ բաղդն հեռու կը տանի
Ինչ որ երեկ արհամարհած ենք արդէն:

Մենք կը սիրենք երբ արեւը ծիրանի
Հալած, հատած մոմի նրման ոգեմար՝
Աչիքներուն զոգն իյնալով շիջանի
Սողոսկելով խարակներէն գառիմար:

Ծաղիկները՝ գոր կը քողունք որ ցամքին
Թօնուտ օդին ցուրտ արեւուն տակ աշնան,
Ծառաներու յանձնած կուպիտ խրնամքին
Թոռմելու մօտ՝ կարծես յանկարծ կ'անուշնան:

Սրբուակները, որոնց բոյրը կը հատնի,
Ա՛յ աւելի մեզ սիրելի կը դառնան,
Ինչպէս դեղնած սիրոյ բրդքիկ մը գաղտնի,
Զոր կը պահենք գուրգուրալով միշտ վըրան:

Եւ մեր սերը՝ ոսկեփետուր քըռջուն ըիլ
Զոր անսուաղ կը լըքանենք շատ հեղ մենք,
Երբ քեւ կ'առնէ կ'ուզէ մեզմէ խուսափիլ
Դողլըղալով մեր հոգւոյն մէջ կը սեղմենք:

Մըրմունջերը՝ որոնք հեռուն կը մարին՝
Կոջնակները, հաշիւնն անգամ շուններուն,
Գորշ ամպերն իսկ փակած կապոյտ կամարին,
Մեկնելու մօտ՝ հրմայք մունին օրօքուն:

Յուզմունքներն ալ կը վըղովն մեր հոգին
Եթէ չբլան երազի պէս քեւաւոր,
Եւ կեանքն արդեօք կ'ըլլմիջ այնքան բանկազին,
Այնքան անուշ, երբ չի սպառնար մահն անոր:

ԻՄ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՍ

ԻԶՄԻՐ, 1 Փետրուար

Տէր Խմբագիր ,



ԵՐԵՎԱՆԻՐԸ , զոր հա-
ճած էք սիրուն ու ան-
ակնկալ հրաւերով մը
ուզղել , պարզապէս չփո-

թութիւն կու տայ ինծի : Իմ , առաջին ,
հրատարակութիւնս : Շատ խոշոր ու կապարի
պէս ծանր չե՞ն այս բառերը : Սիրելի գրածին
պէս միամիտ եւ զգայուն պատմութեան հրա-
շակերտ մը չէք սպասեր : Ձեր հրաւերը իր
մէջ ներում կը պարունակէ : Դրեքս չեն կըր-
նար ըսել թէ որչա՛փ կարմրած եմ գրած ա-
տենս : Կ'օգտուիմ առիթէն :

Պատմութիւնս երկար պիտի չըլլայ , սա-
կայն մէկ երկու գիծ աւելորդ չի համարիք ,
կը յուսամ , հասկընալու համար բնավայրիս
մարդերուն գաղափարները գրականութեան
նկատմամբ : Թուղթը , մասնաւոր զրան գիր
ապուած թուղթը , մասունք էր մեզի համար :
Դիւզացիներէն շատեր կարգալ չէին գիտեր ,
բայց յարգել շա՛տ գիտէին : Դարերով , մտա-
ծեցէք , բոլորիկ երես չտեսնող համայնք մը ,
որուն ցաւին դեղ եղած են Նարեկն ու Աւե-
տարանը , ջատուկին նռնախան , եւ վարժա-
պետին գրած հաւնախը , ուրիշ կերպ վերա-
բերուիլ չէ՛ր կրնար թողդերու հետ : Փողո-
ցին մէջ ինկած թուղթի կտոր մը չէիր տես-
ներ : Սրբապգծութիւն էր պարզապէս : Ա. Բ.
Գ.ը սորված եմ ոչխարի լայն սակորէ մը , ու-
րուն վրայ սեւ խոշոր գրերը ո՛չ կը հինա-
ւին , ո՛չ կը պատռուէին :

Այդ փողովուրդին մէկ զաւակը , երբ Խար-
բերո՞ր Գօլէճ դպրի , վիպական յուզումներու
մէջէն քաղեցի կարծես : Պոլսէն լրագրիներ
կուգային , Արեւելք , Մասիս , Իզմիրէն ալ
Մամուլ : «Լափել» հասարակցած բառը ան-

կարող է ըսել թէ ի՞նչ գուրգուրանքով կը
կարգայինք , արագ արագ , օրը օրին : Կազ-
մած էինք մանուկի գաղափարնիս : Պոլսոյ
գրագէտներուն անունը խորհրդաւոր չեղածով
մը կը փոփոայինք իրարու , մէկը Կիկերոնին ,
միւսը Տիւմային եւ ուրիշ մը Հիւկոյին հետ
կը չփոթէինք :

Այդ ատեն հանդիպեցանք իրարու , Ռու-
բէն Զարդարեանն ու ես , ան՝ մէկ հատիկը
իր ծնողքին , ես՝ որք , իրարու հետ բաժնե-
ցինք մեր ուրախութիւններն ու վիշտերը :
Քով քովի Ռաֆայէլ կը կարգայինք , արամա-
զին գիշերներու մեր զրի առած կցկառար առ-
ղերը կը կարգայինք , ու կը միտիմարէինք զի-
րար : Ատենի մը համար երկուօրեակներ էինք
կարծես :

Մեռած սիրոյ մը յիշատակները քրքրելու
պիտի ստիպուիմ , ուկամայ : Բարձր դասա-
կարգի ընտանիքի մը կը պատկանէր ան . ա-
նունը պիտի չըսեմ , բերանս չայրելու համար
նորէն . տասերկու տարեկանէս տեսայ հե-
ռուէն եւ առանց նայելու պատռած Խնթա-
րիիս ու ծակ կօշիկներուս , սիրեցի տարէց
մարդու մը սիրովը : Տարիներով պահեցի այդ
սէրը խորը հոգիիս , ու պարզապէս կրակնե-
րու մէջ կ'այրէի : Ազքատ ըլլալու՞ զպրօցին
բակը աւելու պարտականութիւնը՝ ստանձնած
էի : Մեծ զանգակն ալ ես կը զարնէի : Ձմեռը
ահագին թին առած ձեռքս , արշալոյսէն եր-
կու փամ առաջ , հասակէս բարձր ձիւնին մէ-
ջէն ճամբայ կը բանայի որ ուսանողները նըն-
ջարանէն սերտողութեան սրտը մեկնին :
Շատ գիշերներ , աշխարհի մէջ մինակ , սի-
րական ծնողքէս որք մնացած , այդ անմիտ
սիրոյն վրայ լացած եմ : Ի՞նչ ընէի արժանի
ըլլալու համար անոր : Ու որոշեցի . . .
բանաստեղծ ըլլալ : Կրցածնուզ չափ խնդա-
ցէք միամտութեանս վրայ , հոգս չէ : Անչափ
մեծ էր պաշտումս Դուրեանի վրայ , որ կը-
սէի ինքնին թէ , եթէ Դուրեան մը ըլլամ ,
գուցէ ան չարհամարհէ զիս : Վիզս ծուռ էր

Ուսանողներն Ըրվինկի պէս, որ նշանածը մեռ-
նելէն վերջը, գլուխը ուղիղ չքալեց աշ-
խարհի վրայ :

Ու գաղանի գրած քանի մը ոտանաւորներս
հաւաքելով Պոլիս զրկեցի Յիշատակաց Ծա-
ղիկներ անուշով, — անրոյր ու խամրած ծա-
ղիկներ, կամ մօրուտի սեղեր պարզապէս :
Գինովի պէս էի : Ի՞նչ ընելու չէի գիտեր :
Յոյսս մեծ մասամբ այդ տպագրութեան վրայ
գրած էի : . . . Անմիշտ յոյսեր :

Վերջին տարիս երազի պէս կու գայ ինծի
Ինչե՛ր քաջեցի, անորոյ մշուշի մէջ թաղ-
ուած խառն ի խուռն կը ներկայանան յիշա-
տակները մաքիս : Երջանս աւարտելէ յետոյ
ա՛լ չէի կրնար խորքերդ մնալ : Անտես բաղ-
ղը՝ բռնած ճակարիս մազերէն, զիս հորիզոնէ

հորիզոն՝ պիտի նետէր : Զարդարեանը համբու-
րելով իջայ խորքերի ըլուրէն վար : Երկար
ատեն սպասած էի Յիշատակաց Ծաղիկներու
տպագրուած մէկ օրինակին : Ի՞նչ պիտի ը-
նէի, ես ալ չեմ գիտեր : Աչքս Պոլիս բացի :
Գրգռիկին տպագրութիւնը Պոլիս լմնցաւ :
Լրագիրները երկար բարակ քաջքեցին զայն :
Ես չնայեցայ երեսը : Իբր թարմ՝ ծաղիկ մը՝
երթէ խորքերդ գար, կրնայի նսւիրել գուցէ
մանկական երազներու քրմանոյչ էակին :
Հիմայ խամրած էին այլեւս : Ես ալ տաք
արցունքներով ողորած, ձօնեցի զանոնք, զիս
աշխարհի վրայ կանուխէն մոռցող պաշտելի
ծնողքիս գերեզմանին :

Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ

Յ Ա Ն Գ Ա Պ Ա Տ Ո Ւ Մ

Գ Ր Զ Ի Զ Բ Օ Ս Ա Ն Ք

Լ Ա Յ Ր Ն ՈՐ Կ Ն Բ Ա Լ Ա Յ Ր

Հայր

— « Բարե՛ւ քեզ, Պարոն կնիսհայր . . . : »

Կնիսհայր

— « Բարե՛ւ : »

Հայր

— « Այսօր ինձ զրւարք ծագեցաւ արեւ .
« Բարեգուր երկինք մեզ պարգեւեցին ,
« Ինձ , ինչպէս եւ իմ ազնիւ կողակցին ,
« Նոր-Երկրորդ — զաւակ մ'ալ . . . »

Կնիսհայր

— « Վա՛յ անօրէն ,

« Դէք այս վերջինն է . . . » :

Հայր

— « Խիս հաւանօրէն . . .

« Սակայն Աստուծոյ կամքն օրհնեալ է յար . . . :

Կնիսհայր

— « Ինչ սիրուն պարգեւ , անո՛յք պատահար . . . :

Հայր

— « Բեզ այս ուրախ լուրն անա՛ սալ կու գամ,
« Կ'ուզեմ որ զաւկիս , աղջի՛կ այս անգամ ,
« Կրնունքին պատաստս բլլալու համար ,
« Գողթր ու ներդաւնակ , վայելուչ , յարմար
« Որոշենք քեզ հետ նա՛խ մի անունիկ . . . :

Կ. — « Աղէկ , շա՛տ աղէկ . . . Ի՞նչպէս է «Նունիկ»

Հ. — « Թէ մայրս հանութիւն ուզէ սալ ի դա . . .

Կ. — « Դրնա՛ , մօրդ հարցո՛ւր , բլլա՛յ «Տալիգա՛» . . .

Հ. — « Բայց կամբը՛ քիչ մ՛ալ՝ կրնո՛ջս , հարսի՛նն է . . .

Կ. — « Հա՛րսն ալ ձայն ունի . . . կոչենք «Արսի՛նէ» .

Հ. — « Թե՛րեւս այդ անունն աղէկ յարմարի .

Կ. — « Մարիա՛մ , Մարիա՛մ , ներպացած՝ Մարի՛ . . .

Հ. — « Բայց չեմ ուզեր որ դիմում քնեմ զուր . . .

Կ. — « Կրնամք անուանել՝ Նոյեմբար — Նեմբուր . . .

Հ. — « Ո՛չ , մանկան դեմքն է աղու , գոյնը՝ վա՛րդ ,

Կ. — « Հակասք՝ շուշա՛ն . . . Է՛հ , քնտենք «Նուարդ»

Հ. — « Շքեւանցն , այսերուն վերայ շողա՛յ կար . . .

Կ. — « Է՛հ , ա՛լ այս անգամ եղաւ . «Շողակա՛ր»

Հ. — « Տեսնե՛ս , ի՛նչ ալ քամ ունի բերանիկ . . .

Կ. — « Նազար չեն տար , հե՛ , դրնենք «Նրանիկ»

Հ. — « Ուրի պիտո՛ւնք իմ մեղր ու կարագս . . .

Կ. — « Եւ կամ՝ Արափի , համառօտ՝ «Արա՛փս»

Հ. — « Գե՛տ չէ՛ , բաւական սիրուն կ'երեւայ . . .

Կ. — « Նախամօր անունն ալ ունիք . «Նւա՛»

Հ. — « Նւա՛ն , որ Ա . . . դամն քաւ երջանի՞կ .

Կ. — « Նսֆն ալ՝ դրախտագուրիկ . . . չե՛ս ուզեր «Աննիկ»

« Անուն մ'որուն մարդ անյապաղ հաւնի . . .

Հ. — « Կնեմա՛յր , եկո՛ւր դրնենք «Աղաւնի»

Կ. — « Այդ սպասուհւոյ անուանց յա՛ր մին է . . .

Հ. — « Տեսա՛ր քաղցրահունչ անունն «Արմինէ»

Կ. — « Պիտո՛ւնք տանք Է՛ն յարմարին հոս . . .

Հ. — « Ի՞նչ կ'ըսես , արդեօք կ'ըլլա՛յ «Մարինոս» . . .

Կ. — « Այդ սքգեղ անուան ինչպէ՛ս կը փարիս . . .

Հ. — « Ես՝ փարած չունիմ . դու կ'ըսես «Փարի՛ս»

Կ. — « Եղբա՛յր , քովդ ես մի անբարբառ անձ եմ . . .

Հ. — « Լուռ կեցած չունիս . . . դրնենք «Փառանձեմ»

Կ. — « Քրքրողդ այդ անուն դրա՛նք քո հայրիկ . . .

Հ. — « Զը յիշեց քերես . . . : Հապա «Դոհարի՞կ»

Կ. — « Շատ չեմ լրսեր ես այդ անունն արդ հոս . . .

Հ. — « Անունն մ՛ալ զոր ես կը պատէմ . «Նարդո՛ս»

Կ. — « Լա՛ւ , քո՛ւլ քու զաւկիդ մընայ , քե՛զ ի պահ . . .

Հ. — « Պիտի սիրելի՞ր որ կոչուե՛ր «Զիպա»

Կ. — « Ո՛հ , ո՛չ , չի վայել նորածին դարուս . . .

Հ. — « Օր մը կը պառւի ան ալ . դի՛ր «Արուս»

Կ. — « Այդ ալ շատ լրսած չունիմ հոս հիմայ . . .

- Հ. — « Կամ Հրոփսիսիմե , կրհասեալ «Սիմայ»
 Կ. — « Մարմարայ ծովուն , մեղմածուփ յալիս...
 Հ. — « Լասինակրօն չեմ' որ կնքենք «Ալիս»
 Կ. — « Իրա՛ւ , մեր սանն ու խրնամելին ե...
 Հ. — « Ալ երկար չեղա՛ւ... ընտրե՛նք «Մելինե»
 Կ. — « Այդ անունին՝ մա՛րդ դեռ չե՛ր սրւեր գին...
 Հ. — « Աղէկ միտս եկաւ . «Վերգինե-Վերգին»
 Կ. — « Մեր յէրֆին ցաւեն գիտնա՛յ առնել մաս...
 Հ. — « Կը տարակուսիմ . . . Զը՞ դրուիր «Էլմաս»
 Կ. — « . . . Եւ միշտ ծընողա՛ց հետն , անձնըւեր՝ հո՛ն
 «Ըլլայ՝ ուր անոնք տառապին . . .

Հ. — «Վերո՛ն»

- « Ալ կայ . . . Բայց հայր մի պարզ դարբին ե...
 Կ. — « Շի՛ք անուն կ'ուզես — կնքենք «Արփինե»
 Հ. — « Կարծիք հարցունե՞մ իմ քահանայիս...
 Կ. — « Կ'արտօնե՞ արդեօք դրնել «Անայիս»
 Հ. — « Հայ անուանց ցանկէն կը զարտուղի դա...
 Կ. — « Օ՛հ , հիանալի՛ գիւտ մը . «Ուղիսա՛յ»
 Հ. — « Բայց յանգ փոխ կ'առնես ամեն հեղ ինե...
 Կ. — « Ի՞նչ վրնաս ունի — հապա «Հեղինե՞» , . . —
 « Դու ալ , հակառակ ջանքիս , հրնարփիս...
 Հ. — « Ո՛հ , ի՛նչ անուշիկ անուն մ'ե , «Նարգի՛ս»...
 Կ. — « Բայց , եղբայր , կեցի՛ր որ խօսս աւարտեմ...
 Հ. — « Ես որոշեցի , լըմընցա՛ւ . «Արե՛մ»
 Կ. — « Ա՛հ , ուրիշ մը քեզ պիտի երե՛կ տար...
 Հ. — « Հօրաբոջս անունն ե , չըլլար «Նեկտար»
 Կ. — « Որ երկինք աղջիկ մ'ալ քեզ կը բաշխեն...
 Հ. — « Իսկ դո՞ւ... : Հասկըցա՛յ : Անուանենք «Աշխեն» :

ԱԼՓԱՍԼԱՆ

ՐԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆՅՇՈՒՐՋԸ

Սիւլիի գեղեցիկ քերթուածին հետ՝ հրատարակեցինք Ալիսայանի «Յանգապատում»ը որ Բարեկենդանի առօրէն կու գայ քիչ մը զուարթութիւն տալու «Մասիս»ի էջերուն մէջ, — յառաջիկային վերապահելով զուտ բանաստեղծութեան, քերթուածներու շարք մը Ալիսայանէն՝ որուն համար ոտանաւորի ոչ մէկ ձեւը ու տեսակը գաղտնիք չունի:


Այս առօրէն, հաճոյք մըն է մեզի համար ծանուցանել քե Ռեթեոս Է.Ֆ. Պերպերեան եւս յօժարելով ընդունիլ նմրագրութեան հրաւերը, խոստացած է մեզի իր պատուարքը աշխատակցութիւնը, և «Մասիս»ի յաջորդ բոլոր պիտի հրատարակենք յարգելի գրագետ-դաստիարակին երկու ոտանաւոր բարգմանութիւնները:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

— 000000 —

« Թէ ԻՆՁ Է ԻՍԴԵՐԻՆ » . — Թարգմ. գերմաներէ Մ. Կ.
Նազիկեան. — Տպագր. Յ. Մատթեոսեան.



ԻՇԴ հարիւր էջէ բաղ-
կացած հատոր մը , որ
« Թարգմանչին Յառա-
ջարան » էն , « Տոքթ. Շահինեանի Նամակ » էն
ու « Մուտք » էն զատ՝ ունի չորս գլուխներ հե-
տեւեալ բաժանումներով . — Զգայութեան
խանգարումներ , Շարժման խանգարումներ ,
Արեան չրջանի , հիւթանջատութեան եւ հո-
գեկան վիճակի խանգարումներ եւ Ախտաճա-
նաչութիւն , ախտին ընթացքը , պատճառները
եւ բուժումը :

Առաջին չունչով իսկ կրնանք ըսել թէ
Նազիկեան էֆ. շատ լաւ ընտրութիւն մը ը-
րած է Բրոֆ. Ռուհէմանի այս գրքոյը հայե-
րէնի թարգմանելով : Ամէն բիշկ կրնայ իր
հիւանդներուն — իրական կամ երեւակայա-
կան — մէջ թուել իսպրապէաներու պատ-
կասելի թիւ մը . եւ այս հատորին ընթեր-
ցումը , աւել տեղ պիտի կրնայ նուազեցնել
այդ խեղճերուն թիւը , զգաստացնելով են-
թակաները եւ զգուշացնելով անոնց վերաբեր-
եալները :

Տոքթ. Շահինեանի նամակը գերման հե-
ղինակին ըսածներուն վրայ գեղեցիկ յաւե-
լում մըն է , քանի որ ինքը կը խօսի անձնա-
կան փորձառութենէ եւ մեր միջավայրին մէջ
տեսած օրինակներուն վրայ : Մեր արդոյ պաշ-
տօնակիցը սակայն քիչ մը չեղած կը թուի
իր դերէն , երբ օրուան անվերջանալի հարցը
քրքրելու փորձ կ'ընէ ըսելով . « Եթէ Հայ. Ե-
կեղեցին ամուսնալուծութեան օրէնք ունի ,
եպիսկոպոս կամ առաջնորդ մըն ալ ի պահան-
ջել հարկին ինչո՞ւ իրաւասութիւն չունենայ
ամուսնալուծում վճռել » : Արդէն մեր պաշտօ-
նակիցն ալ կը խոստովանի վերջը թէ « առնք
անապատի մէջ խօսուած քարոզներ են » ,
ուստի , կարծեմ պատշաճապէս կարելի էր
լռութեամբ անցնիլ այդ նիւթին վրայէն , ինչ
որ բնաւ պիտի չի տկարացնէր իր գործնական
ոգիով գրուած նամակին արժէքը :

Դառնալով գերման Բրոֆէսորին յայտնած
կարծիքներուն , կրնանք բացորոշապէս ըսել
թէ մատնանիչ եղած խանգարումները մեղի
ալ յատուկ են . քանզի ախտերը՝ ազգայնու-
թեան խտրի չեն դնիր : Մասնաւորապէս կը
յանձնարարենք մեր ընթերցողներուն՝ կարգալ
եւ կրկին կարգալ կեղծիքի վրայ խօսող այն
ընտիր հատուածները , որոնք միանգամ ընդ
միշտ պիտի զգուշացնեն զիրենք իսպրապէս
հովեր առնելէ լո՛կ զտրգացած կամ փափկա-
սիրտ ըլլալին ապացուցանելու համար :

« Զգային հիւանդութիւն ունիմ » ըսելով
շատ կրնար ըսել կ'ուզեն թէ իրենք փափուկ
կազմ ունին , գիւրազգած սիրտեր կը կրեն , եւ
իրր այդ , պէտք կը տեսնեն կեղծ ախտանշան-
ներու գիմել , ուրիշներու արգահատանքն ու
համակրանքը իրենց վրայ հրաւիրելու միակ
տենչանքով : Հեղինակը լաւ , շատ լաւ մի-
ջօցներ կը թելադրէ այդպիսիները զգուստու-
թեան բերելու համար , որոնց մէջէն էն սքան-
չելին եւ զիւրամատչելին է փայտ , օրհնած
փայտը , կամ Նազիկեանի թարգմանութեամբ
« Երածեմ ընել » :

Եւ հաս կը փորձուիմ պզտիկ գիտողութիւ-
նով մը վերջացնել այս պզտիկ Գրախօսական
Նազիկեան էֆի նպատակը շատ հիւանալի է ,
ժողովուրդին սորվեցնել առողջապահական
կանոններ : Եւ ասոր համար միայն պիտի
փափաքէի որ լեզուն քիչ մը աւելի պարզ
ըլլար , թէեւ կարծեմ այս հատորը այդ տե-
սակէտով կը գերազանցէ նախորդ թարգմա-
նութիւնները : Բազմր բարբելու ճիգ մը կը
տեսնեմ ամբողջ հատորին մէջ . օրինակ , բրա-
ժեմ , սառնապաղ , ծննդագործարանք , ու-
շաքարձոթիւն , կառնակնաց , մկնակծկոռն ,
որոնք իմէ երկու բառով բացատրուէին՝ ու-
րիշ բացատրութեան տեղ չէր մնար , անա-
ւանդ քանի որ « Ժողովուրդին համար գրուած »
է այս հատորը :

Կը շնորհաւորենք Նազիկեան էֆ.ն իր ընտ-
րութեանը եւ թարգմանութեանը համար այս
հատորին որ անստարակոյս անհամեմատ օգ-
տակարութիւն պիտի ունենայ այն ամէն տու-
ներուն մէջ ուր պարտի մանկ օրական պէտ-
քերուն հետ :

ՏՈՔԹ. ՅՈՎՍ. Տ.-ՍՏԵՓԱՆԵԱՆ

ԱՆՅԵՏԱՅՈՂ ԴԵՄՔԵՐ

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ



ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ եպիսկոպոսը, որ Երեմիա արքեպիսկոպոսի մահէն հազիւ մէկ ամիս ետքը հետեւեցաւ անոր՝ գերեզմանին մէջ, թէեւ անոր գրեթէ տարեկից ու միեւնոյն երկրի զաւակ — ընիկ Խարսբրդցի — բայց բոլորովին ներհակ բնաւորութեան տէր եկեղեցական մըն էր։ Երկրորդը որչափ քաղցրաբարոյ ու ընկերական՝ առաջինը այնքան անհամբոյր ու մենակեաց էր. ո՛չ մէկ ուխտաւոր առանց Երեմիա Սըրբաղանին տեսակցութիւնը ու օրհնութիւնը վայելելու կը մեկնէր Երուսաղէմէն, մինչդեռ Աստուածատուր Սրբազանին հետ անգամ մը գոնէ տեսնուող ուխտաւորները հազուադիւրէն։ Եթէ չքաշուէի միշտ միեւնոյն յետադարձ յիշատակները քրքրելէ, առիթը ներկայացած առեն, պիտի պատմէի՝ իրր 12 տարի առաջ Ս. Յակոբեանց վանքին մէջ կրած սպաւորութիւն՝ այդ խոմոռուղէմ. թաւ յօնքերով, խիստ նայուածքով ու բիրտ ձայնով եպիսկոպոսէն որ այնքան եզակի հակապատկեր մը կը ներկայացնէր զինքը շրջապատող միաբաններուն, ու պատկառանքէ աւելի բան մը. . . վախ կ'ազդէր իրեն մօտեցողներուն։ Նոյն իսկ այն Պոլսեցի եկեղեցականները, որոնց կ'ընկերանայի, ի զուր փորձեցին սիրաշահիլ իրենց հոգեւոր եղբոր սիրտը, ու իրենց առժամեայ բնակութեանը միջոցին վայելել իրմէ ալ նոյն մտերմութիւնը զոր վանքին մէջ մեծ ու պզտիկ, բոլոր միաբանները ցոյց կու տային Տ. Յարութիւն Պատրիարքը իր ակողմը առաջնորդող պատգամաւորութեան նկատմամբ։ Աստուածատուր եպիսկոպոսը

անդրդուելի կը մնար, առանց բնաւ ազդուելու իրեն ուղղուած մեղրանոյշ խօսքերէն ու նրբամիտ կատակներէն։ Կեանքէն դառնացած ու աշխարհէն զղուած ճգնաւորի մը երեւոյթը ունէր իր նկուզ-խցիկին մէջ ուր երբ այցելեցինք իրեն, հազիւ թէ բռնադրօսիկ ժպիտ մը նկարուեցաւ դէմքին վրայ, այն ալ տանտիրոջ տարրական քաղաքավարութեան մը համար. ու առաջին բառերէն, իր խօսակցութիւնը դիտողութիւններու շարք մը եղաւ, յանդիմանական չեղտերով։ Ուրիշ առեն մը, յանդգնութիւն ունեցայ ես առանձին երթալ իր քով, — թզթակցի հետաքրքրութենէս մղուած՝ որ զիս մօտեցուցեր էր վանքին բարձրաստիճան եկեղեցականներէն մինչեւ քրճաղգեացները, քիչ շատ իրական ուսումնասիրութիւն մը կատարելու համար ամբողջ միաբանութեան վրայ։ Կը յուսայի՝ կրօնական նիւթերու վրայ խօսք բանալով, Պոլսոյ հանրային կեանքէն լուրեր տալով, հետաքրքրել զինքը ու անուղղակի interview մը ունենալ իրեն հետ։ Փորձս անյաջող ելաւ, աւա՛ղ, վասն զի շատ աւելի դժուար եղաւ ինծի քանի մը խօսք խլել այդ վանական եպիսկոպոսին բերնէն՝ քան ինչ որ չեղաւ քանի մը տարի ետքը, երբ պատիւ կ'ունենայի Սառա-Պէտրոսի հետ տեսակցելու Պոլսոյ մէջ։

Երուսաղէմէն մեկնելու օրերնիս հրաժեշտ առնելու զայցինք իրեն, ոտքի վրայ արուած հրաժեշտ մը՝ ձեւակերպութեան ու յարգանքի համար միայն, առանց երկար բարակ խօսակցութեան որ նորէն կրնար դիտողութեանց տարափ մը տեղացնել մեր գլխուն, ինչպէս կը պատահէր, երբ միաբանական ընդհանուր սեղանին վրայ սեղանակից կ'ըլլայինք իրեն, ու ճաշերնիս կը վերջացնէինք տաք վիճարանութեամբ մը, մարդերու եւ իրերու վրայ, որուն մէջ անյողգող ընդդիմադիրը կը մնար Աստուածատուր եպիսկոպոս։

Ասով հանգերձ , կ'ախորժէինք իրմէ : ու վերադարձնուա , չօգնուա ին մէջ , մէկէ աւելի անգամներ իր անունը խառնուեցաւ մեր խօսակցութեան , իր եղական վարք ու բարքին ու անկեղծ խստութեանը պատճառով : Ու այսօր , — այդ թուականէն ի վեր սահող տարիներու միջոցին ունեցած կեանքի պզտիկ փորձառութիւններու հետեւանքով , — կը մտածեմ թէ լաւագոյն չե՞ն այդ հազուագիւտ տիպարները խստաբարոյութեան ու ընդդիմախօսութեան քան այն մշտաժպիտ դէմքերը , փայփայիչ խօսքեր արտասանող բերանները ու մտերմական ձեւով չփութող ձեռքերը որոնք ամէն առաքինութիւն կրնան ունենալ բացի անկեղծութենէ :

* * *

Աստուածատուր եպիսկոպոսին միակ սիրական զբաղումն էր ընթերցասիրութիւնը զոր ընդմիջելու հարկին մէջ չգտնուելու համար՝ գործօն պաշտօններէ կը խորչէր , թէեւ միաբանական վարչութիւնն ալ գծգո՛հ չէր անոր այդ տրամադրութենէն , նկատելով անոր զօռարահած ու զիւրադրդիւ բնաւորութիւնը : միայն Տնօրէն Խորհուրդին անդամակցութեան պաշտօնը կը պահէր , աւելի իւր պատուակալ տիպոս մը քան դործող պաշտօնէի վիճակ : Կար սակայն պաշտօն մը որուն համար հոգի կու տար — եւ ասիկա գաղանիք մը չէր վանքին մէջ — Պատրիարքական Փոխանորդութիւնը որուն յաւիտենական թեկնածուն մնաց : Երուսաղեմէն դուրս , իր վարած միակ պաշտօնը եղած է Աղեքսանդրիոյ Երուսաղեմապատկան կալուածներուն տեսչութիւնը , կարճ ժամանակի մը համար , վասն զի շուտով հարկադրուեցաւ հեռանալ այդ քաղաքէն՝ ընդհանուր դժգոհութեան մը մէջտեղ զոր յառաջ բերեւ էին իր անաչառութիւնները :

Այս տարօրինակ եպիսկոպոսը այն համոզումը կը կրէր թէ իր ժամանակակից մարդիկը զինքը չէին կրնար հասկնալ . ստոր համար՝ ընդհանուր արգահատանք մը — չըսելու համար արհամարհանք — ունէր ամէնուն դէմ , Փոքրաւոր անգամ չէր հանդուրժեր իր քով , եւ տարին քանի մը հատ կը փոխուէին . ո՛չ մէկ ձեռնասուն վարդապետ

կամ սարկաւազ հասցուցած է , ու ոչ ոք ունէր իրեն կարեկից ու անձնուէր : Իր մենասէր կամ մարդատեաց առանձնութեանը մէջ՝ մինակ կարգալով չէր բաւականանար սակայն , կը գրէր ալ . հեղինակած է ընդարձակ հատոր մը , Ժամանակագրական Պատմութիւն Երուսաղեմի , օգտուելով զլիաւորապէս արաբացի պատմագիրներէ , վասն զի քաջահմուտ էր արաբերէն գրականութեան ու շատ զիւրութեամբ կը խօսէր այդ լեզուով : Քիչ մըն ալ Փրահսերէն սորված էր : Գալով մայրենի լեզուին , այն թունդ զրաբարեաններէն էր որոնց աչքին պարզապէս մեղք մըն է աշխարհաբարի անունը տալը , եւ իր միակ հեղինակութիւնն ալ գրաբար գրած է արգէն : Իրեն համար՝ փառաւորումի օր մըն էր Ժառանգաւորաց վարժարանին տարեկան քննութեան օրը , ուր կը բազմէր սրահին ճակատը եւ զօռաբին հարցումներ կ'ուզէր աշակերտներուն . ու մեծ հաճոյք կը զգար որ չկարենային պատասխանել իրեն , վասն զի աւտով իր գերազանցութիւնը երեւան պիտի ելլէր :

Աստուածատուր եպիսկոպոսը՝ իր թերութիւններու ու յատկութիւններու այս խառնուրդին շնորհիւ՝ իսկատիպ զրոշմ մը կը կրէր եւ առանձնայատուկ քիթ մը կը ներկայացնէր վանքին ու բոլոր Երուսաղէմի մէջ , Ու կ'ենթադրեմ թէ , իր խստութիւններուն հակառակ , միաբանները անկեղծապէս ցաւեցան իր վրայ , վասն զի այդ ծերունի եպիսկոպոսին մահովը կը կորսնցնէր երէց եղբայրակից մը , որուն տեղը ալ բռնող չպիտի գտնուի :

Այս հին օրերէ մնացած եկեղեցականին զիսաւոր ձիրքն էր անշահասիրութիւնը , — իր խրտչեցուցիչ բնաւորութիւնը շահու ամէն դուռ արդէն փակած ըլլալով իր դէմ . ու իր մարդկային սկարութիւններէն մէկը՝ Բեթղեհեմի գինիին համար ունեցած բուռն սէրը , — արգարանալի սկարութիւն մը այդ մենասէրին համար որ ընկերութենէ լքուած կը զգար ինքզինքը , ու քանի մը բաժակ աւելի պարպելուն մէջ միտքարութիւն գտնել կը յուսար իր ճգնարան-խցիկին խորը :

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՈՒՂԵՒՈՐԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Գ.

ՎԱՐԴԸՆՇԹԱՅՆԻ ՊԱՆԴՈԿԻՆ ՄԷՋ



Ի ահա վարի չէնքին զրան առջեւ աղջիկ մը բուսաւ գեղին՝ ցորենի հասկի պէս, եւ գեղաւ մոյր՝ շուշանի ցօղի պէս. կարծես թէ այս բոլոր չուղէն, չաղէն, բոյրէն, թոյրէն խմորուած, սաղմն առած էակ մը, թերեւս այս բարձունքներուն պարիկը որ դէպի ինձ կը յառաջանար: Յարգանք բարեւեց զիս. իսկոյն ոտքի ելայ բազմոցէն որուն վրայ նստած էի չէնքին առջեւը: «Խնդրեմ նստեցէք» ըսաւ աղջիկը շառագունելով, եւ երբ չէնքին զոռնէն ներս պիտի մտնէր, — Ներեցէք, աղջիկս, ըսի, կը հաճի՞ք ըսել եթէ ա՛յս է Վարդընշթայն պանդօղը. — Այո՛, պարոն. — Բայց կ'երեւայ թէ պարապ է, քանի որ խորին լռութիւն կը արիւնջ ամէն կողմ. — Արդէն մեծ բազմութիւն չունինք հոս, պարոն, կրկնեց աղջիկը, բազնիքներէն եւ քաղաքէն բաւական հեռու ենք. շատ հիւր չենք ունենար, միայն մէկ քանի ընտանիք, որոնք քնութեան գեղեցկութիւնը վայելելու եւ առողջ օգ ծծելու համար կու գան մէկ երկու շաբաթ մնալ մեր պանդօղին մէջ որ պանդօղէ աւելի բանսիօն մըն է: Այս պահուս ալ, օրհանգստեան (sieste) ժամ է. ամէնքը սենեակնին քաշուած են. — Դուք հիւր չէ՞ք. — Ո՛չ, պարոն, այս չէնքերն ու գետինները ծնողացս են. ձմեռը քաղաք կ'իջնենք, ամառը հոս, սա վարի չէնքին մէջ

կը բնակինք եւ այս չէնքն ալ իբր հիւրանոց կը գործածենք. ճաշարանն ու խոհանոցը վարի տանը մէջն են. — Բայց ի՞նչ գեղեցիկ տեղ կը բնակիք կոր, օրիո՛րդ, երկրաւոր դրախտ մըն է այս բարձունքը. — Այո՛, պարոն, իրաւ է, շատ գեղեցիկ տեղ է Վարդընշթայն. 300 մէթրի չափ բարձր ենք քաղաքէն որ՝ տեսէ՛ք՝ ոտքերնուս տակ դէպի դաշտը կը տարածուի. դաշտին մէջէն անցնող գետը՝ Հոննոսն է. անդին դաշտին միւս կողմը հեռուն երեւցող չէնքերու խումբը՝ Մարէնֆէլտ գիւղաքաղաքն է. հեռուն, հեռուն, այս ամէնուն խորը, տեսէք ի՞նչ աղուոր են լերանց բարձունքները որոնք կիսաբոլոր շղթայի մը պէս հորիզոնը կը կտրեն. — Պարզապէս հրանալի է, սքանչելի է, եւ այս ամէնուն վրայ աննման կերպով իշխելու է սա վերի պատըշգամը, ըսի օրիորդին, ետիս դառնալով եւ չէնքին վերի յարկի պատշգամը ցոյց տալով. միթէ սենեակի առջեւ կը բացուի եւ հոն մարդ կը բնակի՞. — Այո՛, պարոն, պատասխանեց օրիորդը, բժիշկ մը եւ իր կինը, պատուական ծերուկ ամուսիններ. — Երջանիկ արարածներ, որչա՛փ պիտի ուզէի քանի մը օր իրենց տեղը ապրիլ. — Բայց շատ բարի մարդիկ են, թերեւս կը հաճին ուրիշ սենեակ մը փոխադրուիլ եւ այդ սենեակը ձեզի առ քանի մը օրուան համար. — Չէ՛, աղջիկս, զիրենք անհանգիստ ընել չեմ ուզեր. — Փորձենք, փորձենք, եթէ այս պահուս ոտքի վրայ են, ըսաւ օրիորդը, եւ թուշուրի մը պէս թեթեւ չէնքէն վեր թռաւ:

* * *

— Այո՛, Թուրքիացի եմ եւ Պալիս ծնած, կը պատասխանէի քիչ ետքը Լաօքթորին, իր պայուսակներէն երկուքը ձեռքերուն մէջ ա-

առած՝ իրեն հետեւելով, երբ ինքը նոյն պա-
հուն կնոջը եւ սպասուհիի մը օգնականու-
թեամբ մնաւորն ու պայտուակները դիմացի
սենեակը փոխադրելու գրադած էր, — իր
սենեակը քանի մը օրուան համար ինծի փոխ
տալու համար, որու մասին չգիտէի ինչպէ՛ս
չնորհակալ ըլլալ :

Առտուն շատ կանուխ արթնցայ, ցատ-
կեցի անկողնէս վար, շուտով հագուեցայ եւ
սպակեգուռը բանալով՝ պատշգամբին վրայ
առի շունչս եւ լազգոյցի մը վրայ նստելով՝
սկսայ գիտել բնութիւնը որ ինքն ալ նոր կը
գարթնուր առտուն արեւին առաջին ճառա-
գայթներէն սթափած : Գիշերուան քօղը որով
ծածկուած էր, կամաց կամաց մէկ կողմ
կ'անէր, եւ քիչ քիչ որոշուիլ կը սկսէին
այն տարտամ՝ անորոշ ցիցերը, կոյտերը,
չէնքերը, որոնք դաշտին վրայ կը ցցուին :
հոն, վարը, քովընտի՝ եկեղեցիին զանգակա-
տունը, քիչ մը ասդին Քաչալէն հօֆ եւ Ռա-
կաց Հօֆ պանդոկներու տանիքները, եւ կը
գծուին Թամինան, Հաւնոսը. քօղը կ'երթայ
կը կառչի շուրջանակի լերանց գոտիներուն
որոնց գագաթները զինքը կը ծակեն եւ ահա
աղջամուղջը կը փարտափ, եւ բնութիւնը եր-
կարատեւ յօրանջներէ ու աչքսփումներէ
եռքը՝ կ'արթննայ եւ կը սկսի մանուկի խա-
ղերը խաղալ, կոյսի անմեղ ժպիտները
ղրկել քեզի : Այդ բարձունքին վրայ քաշ-
ուած, առանձնացած, անէացած, որչափ
երջանիկ էի բնութեան ծոցին մէջ : Որչափ
պիտի ուզէի բանաստեղծ ըլլալ եւ նկարա-
գրել ինչ որ կը զգայ մարդ, ինչ որ աչքին կը
պարզուի հոն՝ այն բարձունքին վրայ զոր այն-
չափ վարպետ վրձինով նկարած է յարգելի
բարեկամս Տօքթ. Թորգոմեան : Արգարեւ՝
«քանի՛ բանաստեղծական է գիտել այդուն այ-
գուն այս լեռները, երբ անոնց ձիւնապատ
ծիր գագաթները պայծառ երկինքի մը տակ,
արեւին սկզբնածագ ճառագայթներով սկսին
ոսկեգոյն նկարուիլ» : Իմ կողմէ պիտի աւել-
ցնէի միայն այս տղերուն թէ՛ անձրեւը որ
առաւունս դէմ ոտոքած էր այս ամէնը, շաղ
մը հոս՝ ցօղ մը հոն առատօրէն սրսկած էր
վարդին կոկոնին ծոցը, տերեւիկին կոնակը,
ճիւղին ծայրը, քարի հատիկին վրան, աւա-

զին մէջ, վերջապէս հոն ուր կաթիլ մը կըր-
նար պարաբիլի. ոսկեփայլ, արծաթափայլ
շաքարաքնդիկներու պէս որ շաքարառուփե-
րու մէջ կ'երեւան շաքարիկներուն մէջտեղե-
րը, քովերը, վրաները, ամենուրեք սփռուած.
եւ արեւուն ճառագայթները չես գիտեր ինչ-
պէ՛ս կ'երթային դանել այս կաթիլները որ
փախըտուք խաղցող տղոց պէս կը սկսէին
ծիծաղ արծաթիլ եւ փալփըլիլ երբ երեւան
ելլէին :

— Պարոն, զանգակը շատոնց զարկաւ,
նախաճաշիկը վերը առնել կ'ուզէք թէ ոչ ճա-
շտօրհ կու գաք : — Եթէ հնար է հոս վերը.
— Բայց այս պարոն եւ տիկինները ձեզ կը
հարցնեն. — Սեղանակիցներս, շատ աղէկ,
ես վար կ'իջնեմ, ըսի սպասուհիին, ոտքի
ելլելով եւ հեռանալով, լաւ եւս է ըսել բաժ-
նուելով բնութեան այս հրաշալի ծոցէն :

Արդէն առջի իրիկունէն սեղանակիցներուս
հետ մէկ մարդ եղանք. Պանդոկին մէջ շատ-
ւոր չենք. Պրագիլիայէն միլիոնաւէր մը կնո-
ջը հետ. Վարչաւայէն ուսու երկրաչափ մը եւ
իր աղջիկը : Ժերուկ բժիշկս եւ կինը. Զիւ-
ռիքէն ընտանիքի մը զաւակները, երկու պա-
տանի եւ մէկ աղջիկ, ահա ամէնը : Սեղանին
զուլը, առաջին տեղը Պրագիլիայի տիկինը
կը բազմէր, անշուշտ, պիտի ըսէք, «պա-
տիւս միլիոնաւորաց» : Բայց ո՛չ, առաջ եւ
կողները՝ առաջնութիւն կը վայելին սեղանին
վրայ. ասկէ զատ, պատուոյ տեղը գրաւելու
մէկէ աւելի յաակութիւն ունէր այդ սիրուն
Պրագիլուհին՝ կլորիկ տփոցն դէմքին վրայ
սեւ սեւ, նշաճեւ աչքերով, որոնց հօրն ու
բոցը գերազանցապէս կը մրցէին ականջներուն
փակած միակաւուր ազամանդներուն հետ : Ե-
րիտասարդ տարիքը, գիրուկ բայց բարեձեւ՝
տանթէներու մէջ կորսուող իրանը, անտա-
լուզեան արիւնը որ երակներուն մէջ կ'ե-
ռար. սպանիական չեշտը զոր խօսած գաղիչ-
րէնին մէջ կը դնէր, արծաթահնչիւն ձայնը,
վերջապէս, այն չեմ գիտեր ինչ չնորհալի
ժպիտը որ յաճախ իր չթուռններուն շուրջը
կը ծաւալէր, անխափր բոյր սեղանակիցները
իրեն յանկուցած էին : Այնպէս որ ամէն մէ-
կերնիւս եթէ սեղանին վրայ իրեն համար տեղ
մը որոշելու պաշտօն ստանձնէինք, անպատ-

ճառ զինքը իր աթոռին վրայ պիտի նստեցընէինք ։ Մեր փոքրաթիւ ընկերութեան հոգին էր ան , ինչպէս արեւը հոգին է երկնային զրութեան ։ Իսկ երկրաչափին աղջիկն ու Ձիւրիքցի օրիորդը՝ փայլածուի եւ հրատի պաշտօն կը վարէին անոր մօտ եւ խակոյն կը նսեմանային ի ծագել արեւու ։

Բայց ես միշտ տօքթօրին ու կնոջը հետ զրազած էի , երկուքին մէջանդն էր աթոռս , եւ ընդհանուր խօսակցութեան մասնակցելով հանդերձ , առիթ չէի փայցնելու այս բարի ամուլին փութկոտ պատրաստականութիւն մը արտայայտելու՝ երբ զինիի , ջուրի կամ ուրիշ բանի մը պէտք ունենային ։ Տօքթօրը եւ կինը սեղանէ սեղան միայն երեւան կ'ելլէին ։ Մենք յաճախ կէս օրէ ետքը , իրիկունսն զէմ , կը միաւորէինք հիւրասրահին մէջ ուր միլիոնատէրն ու երկրաչափ ուսուցիչ հանքային գործերու վրայ դարձնելով խօսակցութիւնը վիճաբանութեան կը բռնուէին , Մենք զանոնք հոն կը ձգէինք երկու գաւաթ գարեջուրի մէջտեղ , ու դուրս կ'ելլէինք պտոյտներ ընելու կամ պարտէզին մէջ քրօքէթ եւ կամ ուրիշ սրահի մը մէջ տեսակ մը ընտանեկան գնդամուզ խաղալու , երբ անձրեւը չնեղէր մեզ դուրս ելլել ։ Այս հաւաքական պտոյտներու եւ խաղերու մէջ էլիզը միշտ մեզի կ'ընկերանար , պանդոկապետին դեղձան աղջիկը , զոր մայրը միշտ մեր քով կը զրկէր , իր հասակակից հիւ-

րերը մինակ չթողելու եւ այս տեղերուն առանձնութիւնը անոնց զգացընել չտալու համար , ուսկից մենք ալ կ'օգտուէինք . էլիզը ամուսնացած է հիմայ , երկու տարի առաջ հարսանեկան ծանուցաքարը ընդունեցայ ։ էլիզ ուրիշ քոյր եւ եղբայրներ ալ ունէր զորս չաեսայ ես . անոնք գեռ զպրօցական էին , զանազան երկիրներ գիշերօթիկ վարժարաններու մէջ դրուած . միայն կրասեր քոյրը Մարթա իրենց քովն էր եւ ցերեկեայ վարժարան մը կը յաճախէր քաղքին մէջ ։ Հայրը , պարոն Պրաէր , քաղքին երկրաչափն էր . ծանրաբարոյ եւ հեզահամբոյր մէկը , որուն մէկ հափիկ խռէտը , լարածիգ երկաթուղի մը իջեցնել էր այս բարձունքէն ուղղակի վար . Ռակացը Վարզընշիթայնի հետ հաղորդակցութեան գնելու համար . զրամի պէտք չունէր , որովհետեւ բաւական ունեւոր էր . բայց Ռակացի ջոջ պանդոկապետներուն հնարքները միշտ պատնէշ կը կանգնէին իրեն զէմ , երբ սա Խորհրդարանի թոյլատուութեան կը դիմէր ծրագիր ի ձեռին . յոյս ունէր սակայն որ քիչ ժամանակէն պիտի յաջողէր . եւ արդարեւ տարի մը ետքը նամակով մը կը զեկուցանէր ինծի թէ լարածիգը ձգուած էր եւ բացման հանգէսին կը հրաւիրէր զիս ի Վարզընշիթայն ։

Տ. Հ.

(Վերջին մասը յաջորդով)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒԹԻՒՆ



ԶԱԿԱՆ երեւոյթ մըն է որ , բաց ի Թրանսվախեան պատերազմէն՝ բոլոր աշխարհի վրայ ոչ միայն կատարեալ խաղաղութիւն կը տիրէ , այլ եւ չկայ ոչ իսկ ներքին կամ արտաքին կարեւոր խնդիր մը ո՛ր եւ է տէրութեան մէջ որ կարող ըլլայ միջազգային ուշադրութիւնը քիչ մըն ալ իրեն քաշել , գէթ պահ մը վերցնելու համար

Թրանսվախեան պատերազմին վրայէն ։ Կարծես թէ երկրագնդի վրայ երկու ազգ կամ տէրութիւն միայն գտնուէին , Անգլիա եւ Պօէր , զի անոնց պատերազմը զրաւած է բովանդակ մարդկութեան ուշադրութիւնը ։ Նոյն իսկ Յրանսա որ մասնաւոր սէր մը ունի երբեմն երբեմն խնդիր մը մէջտեղ նետելով աշխարհքը իր վրայ խօսեցնելու , աս պատերազմին սկսելէն ի վեր զրկուած է տեղեկական հետաքրքրութեան առարկայ դառնալու փառասիրութենէն . մինչեւ անգամ իր ներկայ տարւոյ մէջ բանալիք մեծ Յուցահանդէսին պատ-

բաստութեան լուրերը իրենց կարեւորութիւնը կօրուած են , Միւս կողմէ , ներքին կռիւներով պառակտուող Աւստրիա անգամ բաղդատական հանդարտութեան մը մէջ ինկած կ'երեւայ եւ առաջուան չափ տենդոտ հետաքրքրութիւն չչարմեր : Նոյնպէս հանդարտ վիճակ մը կը տիրէ ծայրագոյն Արեւելքի խնդրոյն եւ բոլոր այն խնդիրներուն մէջ որոնք ներկայ պատերազմը չծագած՝ համաշխարհային մամուլին նիւթ կը մատակարարէին այնքան :

Այս ամէն աննշանութեանց գոյութեան պատճառը բնականաբար նշանաւորագոյն խընդիրն է , պատերազմը , որ երթալով կը սաստկանայ եւ քանի կ'երկարի , այնչափ կը զայրանայ , զի երեւոյթները կը ցուցնեն թէ վճռական դէպքեր տեղի պիտի ունենան ի մօտոյ , որոնք պատերազմին բաղդը պիտի որոշեն : Այնչափ ձախողութիւններէ վերջ առաջին շարքին էր այս որ Անգլիացիները յաջողութիւններ ունեցան . նախ Քիմպրլիի պաշարումը վերցնել տուին , յետոյ թշնամիին հողը մտնել կրցան դեռ առաջին անգամ , գրաւելով Նապոլտալը՝ Օրանժի կողմէն : Բայց աւելի կարեւոր դէպքն է Լորտ Ռոպէրթսի դէպ ի Պէտօմֆօնթիայն արշաւանքը , եւ Քրոնիէ Պօէր զօրավարին անձնատուութիւնը 4000 հոգիով եւ բոլոր զէնքերով , ռազմամթերքներով ու թնդանօթներով :

Եւ մինչ Օրանժի կողմէն բաղդը ժպտիլ կը սկսի Անգլիացիներուն , Նաթալի կողմէն ալ նոր ձախողուած չունեցան , վասն զի անվհատ Պըլլըր զօրավարը չյուսահատելով ընտելի բաղմաթիւ փորձերու անյաջողութենէն , այնչափ անցաւ , դարձաւ թուկէլա գետը որ վերջապէս՝ ըստ նորագոյն լրոյց՝ մէկ ժամու մօտ հասաւ Լէտամիթի , զոր պաշարումէ ազատելը իրեն սեւեռեալ կէտ նպատակի դրաւ սկիզբէն ի վեր : Բայց այժմ իր այդ կողմէ շարժումը ուրիշ կարեւորութիւն ալ ունի . ոչ միայն Լէտամիթը ազատելու ջանք մըն է ըրածը , այլ եւ ահաւոր ժուպէն զօրավարը զբաղեցնել Նաթալի կողմը , որպէս զի օգնութեան չփութայ Օրանժիներուն , որոնց մայրաքաղաքին վրայ կը քալէ Լորտ Ռոպէրթս : Պատերազմին այս նոր երեւոյթին հանդէպ՝ շարժումն լուրերէն է նաեւ Եւրոպական միջամտութեան մը հաւանականութիւնը Գերմանիոյ նախաձեռնութեամբ , բայց ըստ մեզ նուազ հաւատալի է ասիկա , քանի որ Անգլիոյ կողմէ ընդունելութիւնը բացարձակապէս անկարելի է ու երբեք հաւատալու չէ թէ Գերմանիա կամ ուրիշ անէրութիւն ուզէ պատերազմի բռնուիլ Անգլիոյ հետ . Պօէրներուն համար :

16 փետրւ.

Մ.

ԱՆՋԱՏ ԽՈՂԵՐ

Կնոջ ուժը իր գեղեցկութեան մէջ է . մարդուն գեղեցկութիւնը իր ուժին մէջ :

Յաճախ անունը անծի մը համար նոյնն է ինչ որ է տիտղոսը գրքի մը համար :

Երազելը զաղափարներ ծխել է :

Այլը ամուսնութեան մէջ նեցուկն է որուն կը կոթնի կնոջ տկարութիւնը : Երբեմն նեցուկը գաւազան կ'ըլլայ ու . . . կը ծեծէ :

Վեհանձնութիւնը զօրաւորներուն արգահատանքն է , Կարեկցութիւնը ցաւագին ու

ակամայ թրթռում մըն է տկար ջիւղերու . վեհանձնութիւնը՝ առողջ ու ինքնաբեր շարժում մը հզօր մկանունքներու , եթէ կարելի ըլլար սեռ որոշել յառկութիւններուն , կարեկցութիւնը կ'ին եւ վեհանձնութիւնը այր է պիտի ըսէինք :

Ոճը արդի գրականութեան մէջ կը համապատասխանէ անհատապաշտութեան՝ արդի ընկերութեան մէջ :

Ա. Մ.

“ՄԱՍԻՍ”Ի ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

—>—<—



ԱՐՃ Յուշատետրով մը պիտի շատանանք այս անգամ, — կարեւորագոյն լուրերու ամփոփում մը միայն, — արդէն առանձին յօդուած մը նուիրուած ըլլալով Աստուածատուր եպիսկոպոսին, որուն մահուան լուրը հասաւ շաբթուս սկիզբը, եւ էջ մըն ալ հարսանեկան հանդէսներու որոնք մեր ընկերային ու ընտանեկան շրջանակին «աշխարհիկ կեանքի» համեստ բաժինը կը կազմեն :

Կիլիկիոյ կաթողիկոսական շնորոշիւնը իր կատարմանը մօտեցած է : Պատրիարքարանի պատուիրակը Գեր. Տ. Սահակ եպիսկոպոս Խապայեան՝ անցած կօրակի օր մեկներ է Երուսաղեմէն Ատանա ուղեւորելու համար, ուր հաւանարար հասած պիտի ըլլայ այս պահուս, եթէ կանգ չառնէ Մերսինի մէջ : Ինչպէս կը յիշուի, կայս. կառավարութեան ներկայացուցիչ Պէհա պէյ ալ նախընթաց կիրակի մեկնած էր մայրաքաղաքէս : Կը կարծուի թէ կաթողիկոսական ընտրութեան նախնական գործողութիւնները վաղուէն իսկ սկսին, ըստ որում լուսարարապետ Սրբազանը կը փափաքի Զատիկ տօներուն Երուսաղէմ վերադարձած ըլլալ : Վաղը առտու Կ. Պոլսէն ճամբայ կ'ելլէ Սոյս միաբան Տ. Եղիշէ վարդապետ Գալֆաեան՝ Ատանա ուղեւորելու համար ուր պիտի մամնակցի բնորութեան :

Ս. Պատրիարք Հայրը երկուշաբթի օրը Կայս. Պալատ գնաց : Իրիկունը Պատրիարքարան երթալով՝ հոն գիշերեց, եւ երեքշաբթի առտու, տօն Ղեւոնդեանց Քահանայից, ներկայ գտնուեցաւ Մայր Եկեղեցւոյ արարողութեանց, նախագահեց Աստուածատուր եպիսկոպոսի համար կատարուած հոգեհանգրձանեան պաշտօնին եւ այս առթիւ դամբանական մը խօսեցաւ : Նոյն օրը, իրիկուն կողմ, Նորին Սրբազնութիւնը այցելեց մայրվարժարանը եւ մանրամասնաբար աչքէ անցուց աշակերտներուն կարողութիւնը :

Բարեգործական երկու ինքնաբեր ու կարեւոր նուիրատուութիւններ ծանուցուեցան շաբթուս մէջ : Ֆիլիպէէն, Կարապետ Էֆ. Էղնայեան 150 ոսկի դրած է Ս. Պատրիարք Հօր տրամադրութեան ներքեւ, Սոյս վանքին մէջ բացուած Ժառանգաւորաց վարժարանին գործածուելու համար՝ բարդուելով Շահնազարեան կտակէն մնացած գումարին վրայ : Մանչեսթերաբնակ ազգայիններն ալ 400 անգլ. ոսկի դրած են Ս. Պատրիարքին, Կարօտեալներու ինպստ : Այս երկու նուիրատուութեանց համար ալ Պատրիարքական օրհնութեան գիր զրկուեցաւ :

Վարչական ժողովները եւ Նպաստից Յանձնաժողովը նիստ չըրին շաբթուս մէջ :

Մարսիլիաքեակ Հայոց հոգեւոր հովիւը, Տ. Սահակ քահանայ Իւթիւճեան, որ իբր 19 տարի առաջ գացած էր այդ քաղաքը ու կը քահանայադորձեր հոն, պահ մըն ալ Բարիզ, նախորդ շաբթուն մեռեր է՝ տառապաղին հիւանդութենէ մը ետքը : Յուզարկաւորութեան եւ օծման հանդէսին նախագահներ է Եւրոպայի Հայոց առաջնորդ Գեր. Տ. Գէորգ եպիսկ. Իւթիւճեան : Հանդուցեալ քահանան, բարեյիշատակ Տ. Յովհաննէս Հիւնքեարպէյէնտեանէ ետքը, Բարիզի ու Մարսիլիոյ Հայոց առաջին հոգեւոր հովիւն է, ու իր նախաձեռնութեամբը բացուած են այդ տեղերուն հայկական մատուռները :

Կը պատմեն թէ, իր ստաջին երեւումը Մարսիլիոյ Սակարանին մէջ — ուր կացած էր քաղքին ծանօթ ազգայինները գտնելու եւ զաղթականութեան վիճակագրութիւնը պատրաստելու Ներոէս Պատրիարքի յանձնարարութեամբ, — անօրինակ ուրախութիւն մը ու զարմանք պատճառեր է հոն գտնուող Հայերուն որոնք չընկալած են զինքը «Տէր Հայր» գոչելով : Ու ո՛րը կնուէր, ո՛րը պըսակի հրաւիրելով զինքը, չեն թողած որ մեկնի, — թէեւ Տ. Սահակ քահանայ մը շաբթուան համար միայն գացած էր : Այդ քանի մը շաբթիւ եղաւ տասներինը տարի :

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐ



ԱՍԻՍԻ ներկայ թիւին մէջ ալ ծանօթ ընտանիքներու վերաբերող երկու ամուսնութիւններ ծանուցանուելու հաճելի ատիւթը ունինք :

Վսեմ. Տօքթ. Խորասանճեան էֆէնտիի որդին՝ Պետրոս պէյ՝ անցեալ հինգշաբթի ամուսնացաւ Օր. Գոնի Եռայեանի հետ (Իլմիրէն) : Պսակի արարողութիւնը կատարուեցաւ Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին, Ս. Պատրիարքին նախագահութեամբ եւ հայ ու օտարազգի հրաւիրեալներու ընտանիքով ըստ մութեան մը ներկայութեամբ : Պսակի խորհուրդէն ետքը, հարսնեւորները առաջնորդուեցան Սըլանախի հանդիսատարը ուր շքեղ սեղանի մը շուրջը՝ բաժակներ պարպուեցան նորաստեղծ ամուսին կենացը եւ շնորհաւարութիւններ ուղղուեցան մեծայարգ բժշկապետին ու իր Տիկնոջը՝ իրենց որդւոյն ամուսնութեանը ատիւթը : Ծնորհաւորութիւնները կրկնուեցան, երբ Վսեմ. Ընտանիք փաշա հանդիսատարը զարմ. Պետրոս պէյին յանձնեց Գ. կարգի Մէճիալէ պատուանշան զօր Վեհ. Սուլթանը լսողական էր շնորհելու օրը : Քաղաքապետ փաշան հարսին ալ աղամանդազարդ ժամացոյց մը նուիրեց :

Պար եւ նուագաւորութիւններով ուսանողները ժամանց մը անցուցին երկուսն էլ լսողական ընտանիքին մօտ : Պարսկական արարողքը ատիւթը այս հարսնեւորները խորհուրդին :

Պետրոս պէյ Խորասանճեանի որդի է մէջ զատարարութեամբ ու Իրանի արարողքին մարտարանէն Տօքթօրի վկայական ստացաւ, Հանրօգուտ Ծինութեան նախարարութեան մէջ օգնական — իրաւագէտի պաշտօն կը վարէ : Իսկ Տիկին Գոնի Խորասանճեան՝ Անգլիոյ մէջ կրթուած, իր լեզուագիտութեամբ ու ստացած ընտիր զատարարութեամբը հայ իգական սեռին պատուարեր անդամուհիներէն :

է : Այս ամուսնութեան ատիւթ եւս դրամական նուէրներ եղան Ազգ. Հիւանդանոցին, փոխան ծաղկեփունջի :

Միւսնոյն օրը, 10/22 փետրւար, Ֆիլիպէ, Էգնայեանց բնակարանին մէջ կատարուեալ է Սիսակ էֆ. Աշճեանի ամուսնութիւնը Օր. Արաքսի Գափամաճեանի հետ, — զուարկարար էֆ. Գափամաճեանի եւ քենի Տօքթ. Վահրամ Թորոգմանի որ յաւկապէս զացած էր ներկայ զանուելու հարսնեկան հանդէսին : Սիսակ էֆ. Աշճեան, — ինչպէս օրաթերթերը ծանուցին իր նշանախօսութեանը ատիւթը որ կատարուած էր Ազգ. Պատրիարքարանի մէջ, — ինչն օգնութեամբ յաւաքացած երիտասարդ մըն է որ այսօր ազամանի վաճառականութեամբ կը զբաղի Բարիկ, ընկերակցութեամբ Աթանիկ էֆ. Էգնայեանի որուն կողմէ՝ փոխանորդաբար կընքանայութիւնը կատարեց եղբայրը Կարապետ էֆ. Էգնայեան : Իսկ Տիկին Արաքսի Թաշճեան, շրջանաւարտուէր Գաղղիւղի Արամեան վարժարանին, լաւ զատարարութիւն մը առած ու բնածին յատկութիւններով օժտուած, Բարիկաբնակ հայ ընտանիքներուն մէջ համակրելի զիրք մը զբաղուելու կոչուած է : Նորաստեղծ ամուսնութեան յաջորդ օրը՝ Ֆիլիպէէն Բարիկ ուղեւորներ է ուր պիտի բնակին :

ԳՐԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ Ա Ի Ա Ռ Ա Յ Ի Ն Դ Պ Ր Ո Յ Ն Ե Ր Ո Ւ

Արթ. Տիրայր վարդապետ, միաբան Արմաշի ու ժրպան վերակացուն Դպրեւանքի որբանոցին, մէկ օրինակ տարեկան «Մասիս» նուիրեց Սիսի որբանոցին :

Սերաստիոյ Որբանոցին խնամակալութիւնը խմբագրութեան ուղղուած նամակով մը՝ մէկ օրինակ «Մասիս» ինչպէս էր, երկուսն սաներուն զրական ժամանց մը ընծայելու համար, Մեր բարեկամներէն Թաղէոս էֆ. Էմմէքճեան՝ խօսակցութեան մը առիւթ դիպուածաբար խնամալով այս դիմումը՝ ինք ստանձնեց այս նուիրատուութիւնը :

Սիլանիկի ազգայիններէն Յարութիւն էֆ Աճէմեան մէկ օրինակ տարեկան «Մասիս» նուիրեց իր ծննդավայրին՝ Մալկարայի ազգ. վարժարանին :

ԱՐՏՈՒՄԱՏԷՐ Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. Մ. Ս. Ե. Ե. Ս. Ս. Ս.

Թիւ 27, Ֆինճանճըլար Եօղուշու, Կ. Պոլիս

Ի Ի Ն Ի Օ Ն

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնուած 1828—1829 ին



ԵՐԱՇԽԱԻՌՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՀԻ ՃԻԻՂԻՆ
97 Միլիոն

ԵՐԱՇԽԱԻՌՈՒԹԻՒՆ ԿՆՆԱՅ ՃԻԻՂԻՆ
137 Միլիոն

Ընկերութեան զրամատուէն է
ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱՆՆ

Թուրքիոյ եւ Պուլկարիոյ Տնօրէն
Սիւնոն եֆ. Բայսերլեան

Կենաց ճիւղին տեսուչ
Միհրան եֆ. Տեր Ներսէսեան

Կ. Պուլիս, Կալաթա, Թահտապուրուն խան
Օամ. Պանքային դէմ

THE INTERNATIONAL BROKER


(Ծանուցում)

Այն քուլոր վաճառականները, նաւորները, խաղարկուները, հարկները, ա-
ռեւտրական մարդիկը, կալուածատէրները եւ մասնաւոր անձեր որոնք գնելու կամ
ծախելու բան մը ունին, ինչպէս տուն, շինութեան տեղ, հողեր, հանքային հորեր,
գործարաններ, առեւտրական տուններ, բաղէնդներ, կամ զանազան ապրանքներու
ծրարներ, մեքենաներ, եւայլն, ինչպէս նաեւ այն տեսակ մարդիկ որոնք կ'ուզեն
ուրիշ մը հետ ընկեր ըլլալ կամ ընկեր մը կը փնտեն, հետապնդող իշխաններ, ա-
ռեւտրական գործառնութիւններու, սնտիքաներ եւ ընկերութիւններ կազմելու եւ
կամ թէ առեւտրական որ եւ է գործ մը աշխարհիս որ եւ է մէկ մասին մէջ կատա-
րելու համար, պէտք է որ կարգան, բաժանորդ գրուին (տարեկան 2 շիլլին) եւ աղ-
դարութիւններ տան վերը միջուած նպատակներէն միոյն համար, կամ պատաս-
խանեն եղած ծանուցումներու որոնք կը հրատարակուին The International Broker
մէջ. հասցէն 11, Southampton Row, London W. C.

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ, բժիշկ եւ մասնագէտ յղային տկարութեանց, սաամուք-
սի, աղեաց հիւանդութիւններու, ծննդամիղական եւ դաղղիական ախտերու: Բերա,
Թագսիմ փողոց, թիւ 10, ամէն օր .կէս օրէ վերջը:

ՏՈՔԹ. Ն. ԹԻԻԼԵԱՆ, բժիշկ-մանկաբարձ, հաստատուած է Մաքրիքէոյ,
Սաղըզ Աղաճ, Արդարեան դեղարանին դէմը: Հիւանդ կ'ընդունի ամէն օր (երեք-
շաբթի օրերը՝ կէս օրէն վերջ ձրի): Երկուշաբթի եւ ուրբաթ օրերը, ցորեկէն ետքը
կը գտնուի Սամաթիա, իր նախկին բնակարանին քով: Կը դարմանէ ամէն տեսակ
հիւանդութիւններ եւ կը կատարէ վիրաբուժական գործողութիւններ մեծ ճարտա-
րութեամբ:

ՏՈՔԹ. Յ. ՈՍԿԵԱՆ, Կ. Պուլիս վերադարձած ըլլալով, հաստատուած է Բերա,
Պէքեար փողոց թիւ 1 տունը, ուր ամէն օր՝ ներքին եւ արտաքին ամէն տեսակ
հիւանդութիւններ կը դարմանէ: Հինգշաբթի, կէս օրէն ետքը, աղքատներուն ձրի:



Ն Ի Ո Ւ Հ Ո Մ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Որ կը մեցի միւս բոլոր կարի մեքենաներուն հետ

ՊՍՐԶՈՒԹԵԱՄԲ

ՏՈԿՈՒՆՈՒԹԵԱՄԲ

ԱՐԱԳՈՒԹԵԱՄԲ

ԹԵԹԵՒՈՒԹԵԱՄԲ

ԱԺԱՆՈՒԹԵԱՄԲ

Թուրքիոյ համար միակ ներկայացուցիչ

ՅՈՎՀԱՆՆԵՍ Կ. ՄԻԱՆԵԱՆ

Կեդրոնաւեղին, Սիրքէի, Բէօրլիլ խան, Թիւ 3

Մասնաւեղ, Ղալաթիա, Պէոյիւք Միլլէթ խան, Թիւ 33

Գնողներու համար վնասուան եւ ամեն տեսակի դիւրութիւններ

Ուսարուքիւն գործարարի մարտիկն



ՔԷՅԻ

ԽԱՌՆՈՒՐԳՆԵՐ

ամէնէն դժուարահան հաւակներն
անգամ գոհացնող :

ԵԱՎՐՈՒԵԱՆ


ԵՒ

ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

թէյի խառնուրդները

ԱՌՈՂԶԱՊԱՀԱԿԱՆ

Ըլլալու յաւկութիւնը եւս ունին :



Եալլուեան և Իսա-
գուլեան թէյի խառ-
նուրդներու վաճառա-
տունը կը գտնուի Կ.
Պօլիս, Ճէլալ պէյ
խանին տակ, Թիւ 10 :

Ուշադրութիւն վաճառասան մարտիկն

Գ. ՊԱՂՏԱՄԱՐԵԱՆ

ԱՇՆԱՆ ՏԵՐԵՆԵՐ

(Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ)

Ամենէն անօթիւն ծնողներն իսկ, առանց խղճահարութեան կրնան իրենց
զաւակաց յանձնարարել այս գիրքը, որ խիստ հախաւոր եւ համեմատ լեզուով
կը խօսի եւ գործնական դարձանքի ցոյց կուտայ ընտանեկան յարկերուն ասի
ողբալի նախնիները գործող եւ գրեթէ տարաբնակի համաձայնակի մը հանգա-
մանքը ստացող տղոց յատուկ վատ ունակութեան մը վրայ, որ գեղարվեստ
պատմաններն ու ծաղկերամ երիտասարդները կը թառամեն : Արդէն երկրորդ
տպագրութեան արժանաւոր ինքնին ցոյց կուտայ գործին օգտակարութիւնը .
հետեւաբար ջերմապէս կը յանձնարարուի ամէն դասակարգի ընթերցողներու :

Գին 4 դրու

Կեդրոնաւեղին և Ե. ՄԱՏԹԵՆՈՍԵԱՆ վաճառատունը, Թիւ 27, Ֆինան-
ճըրար եօզուշու, Կ. Պօլիս : Կը գտնուի ամեն գրալաւառներու հով :

ԿԻՍԱՄՍԵԱՅ “ՄԱՍԻՍ” Ի 1899Ի ՏԱՐԵՇՐԶԱՆԸ, 608 կրկնաօրինակ էջերէ
բաղկացած, ճոխ բովանդակութեամբ, իբր ամբողջական հատոր մը թղթակազմ, հրա-
պարակ եղած է եւ կը ծախուի ամէն գրալաւառի քով : Կեդրոնաւեղին և Ե. ՄԱՏԹԵ-
ՆՈՍԵԱՆ Տպարան : Գինն է 40 դր. : Դաւառներէ ուղղորդները պէտք է 5 դր. աւելի
վճարեն իբր թղթատարի ծախք :